

ԲԱՐՅՈՒՅԵ ԱԼԵՎ

ՕՐԱԿԱՐ

ԲԱՆԱԿԱՆ, ՏԵՍԱԿԱՆ, ԵՒ ԲԵՆԵՐԱԿԱՆ

ԳԻՏԵԼԵԸՑ

Բ. ՏԱՐԻ, ԹԻՒ 9.

1844

ՄԱՅԻՍԻ 1.

ԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ԲԱՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ

ԽՐԿԱՊՐԱՅԻՆ Պատիւրէրք¹:

ԽԱԳՈԳԻ անունով բնագետը Շահ-
Դըրպուրկ քաղաքը 1839^ն նոր գիւտ
մը գտաւ՝ առանց շատ աշխատան-
քի ու ծախքի որ և իցէ փորուածք-
ներու պղնձէ պատկերը առնելու, բար-
ձրաքանդակ զարդերուն նմանը շնու-
լու, մետաղները ոսկեզօծելու, ար-
ծաթազօծելու, և այլն։ Հոս աս բա-
նին վրայ տուած տեղեկութիւննիս
պարզելու համար՝ բացատրենք գոր-
ծիքը։

Խախ պէտք է ապակիէ երկու անօթ-
ունենաս՝ մեծ ու պղտիկ, այնչափ որ
մէկը մէկալին մէջ կարենայ սղմիլ։
Պղտի ամանն որ մէկալին մէջը պիտի
դրուի ըսինք՝ պէտք է որ տակ չունե-
նայ, հապա տակի տեղ մագաղաթի
կտոր մը պրկած կապէ. և մէջէ մէջ
դրուած ատեննին՝ պղտիկը ինչուան
մեծին տակը չինչնայ, հապա չորս
հինկ մատնաչափ բարձրկեկ կենայ։

Խրկրորդ, պղտիկ ամանին կլորու-
թե չափ զինկ ըսուած մետաղէն ա-
նիւ մը շինէ, ու մետաղէ հաստըկեկ
թելի մը մէկ ծայրը աս անուին կըպ-

ցուր. Թելին ալ երկայնութիւնը այն-
չափ ըլլայ, որ զինկը մեծ անօթին
մէջ դրած ատենդ՝ ծայրը չափաւոր
երկայնութեամբ ամանին բերնէն
դուրս մնայ։

Խրրորդ, որ և իցէ փորուածքին մա-
նը աս կերպով ունենալու համար՝
պէտք է յառաջագոյն անոր գաղափա-
րը շինես ուրիշ մետաղէ մը։ Դաղափա-
րի համար գործածուած մետաղի բա-
ղադրութիւնն է 8 մաս պիսմութ ը-
սուած մետաղը, 5 մաս կապար, 3 մաս
անագ, որ խիստ քիչ կրակով կը հալին
և ուշ կըպաղին։ Ի՞ս իրեք մետաղնե-
րէն ըսած չափովս առ մէկտեղ կրակի
վրայ դիր ու հալեցուր. կրակէն ետ
քաշէ, ու երբոր պաղելու վրայ է՝ ու-
զած դրամիդ կամ զարդիդ մէկ երեսը
զարկ կիսհալնիւթին վրայ ու թող
որ պազի։ Օ արկ ըսելս անոր համար
է որ դրամին ու հալած մետաղին մէջ-
տեղը օդ մնալով ելածը ծակ ծակ ու
արատաւոր չըլլայ. վոր զի զարնելովդ
մէջի օդը դուրս կ'ելլէ ու պատկերը
անարատ կ'ըլլայ։ Խրբոր բոլորովին
հալած է մետաղը՝ դրամը զատէ. կը
տեսնես որ դրամին պատկերը մետա-

1 Գ. Գ. Galvanoplastique.

զին վրայ ելած է : Աս պատկերը պիտի ըլլայ գաղափար մը, որուն վրայ ուղածիդ չափ պղնձէ դրամներ կարենաս շինել :

Աւստի գործիքը գործածելու համար՝ պէտք է որ աս գաղափարին վըրայ մետաղով կպցընես թելին երկրորդ ծայրը, և գաղափարին ծայրերն ու ետևի դին մոմոտես : Ետքը մեծ անօթին մէջ լեցուր ջրախառն ծծմբային թթուուտ՝ ամենատկար :

Օ ինկը աս թթու ջրին մէջ դրուելով կըսկսի բացասականապէս ելեքտրանալ ու ջրածին կազի մանր պղպղակներ կ'ելլեն ջրէն դուրս : Ի, մանապէս պղտի ամանին մէջ ալ դիր ջրով հալած պղնձի ծծմբուտը², և պղտի ամանը մեծին մէջ տեղաւորէ, բայց անանկոր մագաղաթը զինկին չդըպչի. ասկէ ետքը շինած գաղափարը կախէ պղնձի ծծմբուտին մէջ : Ի՞ս գործողութեամբ ծծմբուտի բաղադրութեան մէջ որչափ պղնձի մասունք որ կան՝ կը կպցին գաղափարին վըրայ, ու ելեքտրականութենէ առաջ եկած ձգողութեամբ՝ կը միանան ու մետաղի կերպարանք կ'առնեն : Քանի կ'երթայ մետաղը կը հաստընայ, և քսանուչըրս ժամու մէջ բաւական հաստութեամբ կը ձեանայ դրամին ամենին նմանը :

Բայց կան քանի մը բաներ ալ՝ ու-
րոնց վրայ մտադրութիւն ընելու է :
Ո՞ւյմը, նայելու է որ պղնձի ծծրմէ
բուտը միշտ կշտացած՝ ըլլայ. ապա թէ
ոչ, պղնձի մասունքը փոշիի պէս կը
նստին գաղափարին վրայ ու իրաբու-
հետ չեն միանար . անոր համար
քսակով մը կախելու է աս աղէն ան
ջրին մէջ, որպէս զի մէկ կողմանէ
որչափ որ պղնձը պակսի՝ մէկալ
կողմանէ հալելով տեղը լեզրնէ :

— Article 16 —

1 q.z. Acide sulfurique.

2 Գ.լ. Sulfate de cuivre. Տ. է. էւ բաւ :
3 Կապոյծ ըսելով կը համարցուի ան՝ որ ջուրը
բաւական աղ հալեցընելէն ետքը աւելի չկարենայ
հայեցնել :

տի ըլլայ, չենէ պատկերը ծակծըկած
կ'ելլէ:

Գ. Ուշ որ գաղափարը մաքուր
է, ելած պատկերն ալ մաքուր կ'ըլայ.
չենէ աղտոտ :

Դ. Ելեքտրաձոյլ պղինճը բոցագոյն
կարմրութիւն մը կ'ունենայ, որ օդ
տեսնելով կը փոխուի . բայց կը ակի
պէս տաքցընելով՝ սեկակ երկաթի
գոյն կ'առնէ և անփոփոխ կը մնայ:

Ե. Այլեքտրաձոյլ պղինձը թէպէտ
և առաձգական՝ բայց սաստիկ ալ
փխրուն կ'ըլլայ . թէ որ տաքցընելին
ետքը կամաց կամաց պաղեցընես՝ կը
պնդանայ , իր փխրունութիւնն ալ
կըկորսունցընէ :

2. Կայելու է որ զինկին ու գաղափարին դիրքը ըստ կարի իրարութուգահեռական ըլլան . չենէ ելեքտրաձոյլ պղնձին հաստութիւնն ալանհաւասար կ'ըլլայ :

Է . Ո՞ւ որ ելեքտրականութիւնը
սաստիկ ըլլայ , պղինձն ալ անկարգ
կերպով կը հաստընայ . գունտ գունտ
կը ժողվի , և տեղ տեղ բոլորովին բա-
րակ կը մնայ . իսկ ելեքտրականը տիկար
ըլլալով պղինձն ալ միակերպ կը հաս-
տընայ :

**Ոսկեզօծելու ու արձաթազօծելու
վրայ ուրիշ առափելով կրխօսինք :**

ԲԱԿԱՆԻ ՊԱՏՐՈՒԹԵՐՆ

1 *παραστάση* **2** *παραστάσεως*

լյսութութ սքանչելի նախախնա.
մութիւնը աշխարհիս ամէն կողմը
այնպիսի բոյսեր բուսուցեր է, որ նոյն
կողմերը չեղածներուն տեղնալ բռնէ.
աս տեսակ բոյսերէն մէկը լցա-
մաթուզ կամ Պանան ըսուածն է,
մէկն ալ լնանասը, որոնց վրայ զատ
զատ հոս խօսինք :

Ը շամաթուզը, որ ԱՌալապարի լեզուով գումանալու կ'ըսուի, տաք երկիրներու մէջ մեծ ջանքով կրմշակեն,